ԱՐՄԷՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Այն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 18-դ չրջանի (902 նոյ. —903 օգոստ.) բաժնորդագինն է 20 ֆր. կանխիկ կարելի է նաև բաժնորդագրուիլ քանի ամսի համար որ ուզուի, ամսականը 2 ֆր. հաշուելով և 1903 օգոստոս ամսէն անդին չանց ելու պայմանով։

Նամակ և ծրարպէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, Rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France).

ԺԸ ՏԱՐԻ ԹԻԻ 28

1903 ՀՈԿՏԵՄԲԵՐ 28 Դ.

(Հ. Տ. Հոկտեմբեր 15)

(փոխարէն ՄԱՑԻՍ 13ի)

ԳԱՑՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, հաժարութեամբ և կամաժասնժ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Վարաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։

Յանուցմանց կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։

Յանուցման 1 միջակ գիրը 1 սանտիմարժէ։ 1 գլխագիրը 2 սանտիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de Rédaction : Rue Beaument, 9.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ,

Էջմիածնի գանձարանի եւ գոյքերի բռնի գրաւումը. — Կ. պոլսի պատրիարքարանին առաւելապատիւ կառավարութեան ղրկուած փաստագիրը. — Ռուսիոյ Հայերի եկեղեցապատկան կալուածներու գրաւման մասին. — Գարսկանինգկաստանի Գեր. Առաջնորդը. — Սպանութեան փորձ Ա. Նազարպէկի վրայ եւ սպանութիւն Սագուճիի. — Բաֆֆիի կեանքից. — Անգլեւֆրանսական իրաւարարութեան պայմանագիրը. — Ծանուցումներ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ "ԱՐՄԷՆԻԱ,,Ի ԺԸ ՇՐՋԱՆԻՆ

1902 ՆՈԵՄԲԵՐ–1903 ՕԳՈՍՏՈՍ

18րդ չրջանի բաժնորդագրութիւնը կըսկսի 1902 նոյեմբերէն և կը տեւէ մինչև 1903 օգոստոսի վերջը։ Ամբողջ 18րդ չրջանի բաժնորդագինն է 20 ֆրանգ կանխիկ վճարելի։ կարելի է նաև բաժնորդագրուիլ քանի՛ ամսի համար որ ուզուի, ամսական 2 ֆրանգ հաշուելով։

Անհնար որ ԱՐՄԷՆԻԱՅԻ ՕԺԱՆԴԱԿ կը գրուին մեր հրատարակած Օժանդակութեան կանոնագրի համեմատ կատարելով իրենց պարտականութիւն, իրաւունք կունենան, իրենց ստացած 1 օրինակ Արմենիան ուզած — որի համար ամբողջ բաժնորդագին 20 ֆր. պէտք է վճարեն —, քանի՛ անձի համար որ ուզեն, Արմենիա բերել տալու իրենց ստացած լրագրի ծրարին մէջ դրուելով և կէս բաժնորդագնով, այսինքն՝ ամբողջ չրջանին համար 10 ֆր.ով և կամ ամսական 1 ֆր.ով։ Ցանկացողին կը ղրկենք «Արմենիայի Օժանդակութեան» համար մեր հրատարակած կանոնագիրը։

Բաժնորդագինների կանխիկ վճարումը մեծ դիւրութիւններ կընծայէ թերթի կանոնաւոր ընթացքին և յայտնի է որ Եւրոպայի և Ամերիկայի մէջ ամէն ազգեր սովորութիւն ունին իրենց ստացած լրագրի բաժնորդագինը կանխիկ ղրկելու. անոր համար իրենց լրագիրները ալ կրնան կանոնաւոր ընթացք մ՚ունենալ։

ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱՆՁԱՐԱՆԻ ԵՒ ԳՈՑՔԵՐԻ ԲԻՒՆԻ ԳՐԱԻՈՒՄԸ

Ռուսահայաստանեայց մեր թղթակիցներէ մին հաղորդած է մեզ հետեւեալը.

Օգոստ. 5ին (1), Հայոց կալուածները ցուցակագրող Պետական յանձնաժողովը վեհափառին ներկայացաւ և պահանջեց Էջմիածնի գանձարանը։ վեհափառը պատասխանեց (քիչ հաւատալով) այսպէս.

«Երբ ես Էջմիածին մտայ, երդուելով ընդունեցի Ռուսաց մեծազօր կայսեր հպատակութիւնը, ուխտեցի չխնայել իմ անձս և իմ արիւնս թագաւորի կեանքին և փառքին համար և որոշեր էի, եթէ երբ և իցէ հարկ լինէր պաշտպանելու իմ թագաւորի կեանքն ու պատիւը, ես դուրս գայի ասպարէզ, ձեռքս առած խաչն ու Աւետարան՝ առաջնորդէի իմ ազգին դէպի փառքն ու մահը, ցոյց տալու միանգամ և Հայոց ազգի դարաւոր հպատակութիւն։ Այսու հանդերձ, պիտի ըսեմ հրապարակաւ որ յիշեալ երդման հետ միաժամանակ երդուեցի Աստուծոյ առջև, ինձ հաւատացած եկեղեցւոյ, իմ ժողովրդեան առջև, մըննալ հաւատարիմ Ս. Եկեղեցւոյս և Ազգիս, պահպանել նրա դարաւոր սրբագործուած իրաւունք և արտօնութիւններ և երբէք չդաւաճանել իմ կոչմանս եթէ երբէք նոյն իսկ մահ ինձ վիճակուի, այլ ինչ որ ստացեր եմ իմ նախորդներից, նոյն և անթերի թողնել իմ յաջորդին. Ինձով հանդերձ հաւատարիմ հպատակ իմ թագաւոր–կայսեր, ես յայտնում եմ, որ երբէք չեմ կարող ընդունիլ և երբէք չեմ համաձայներ ձեր առաջարկին որ միանգամ կը յետաչրջէ ինձ հաւատացած եկեղեցւոյ դարաւոր իրաւունքներ ու վարչական կարգեր։

«Ես այս խնդրի առթով իմ աղերս հասցրել եմ մինչև Թագաւոր–կայսեր գահը (1). իմ բանակցութիւնս նախապարտութեան հետ կը շարունակուի։ Ես հաւատացած եմ որ Նորին կայսերմեծութիւն իւր նախորդաց նման հովանաւոր կը հանդիսանայ Հայ եկեղեցւոյն, ինչպէս ցարդ հովանաւորած է, և կը վերցնէ գառնութեան այս բաժակ որ կախուած է այսօր 3 միլիոն հայ ժողովրդի գլխին. և ես իբրև աւանդապահ կը մնամ հազարամեայ սեփականութեանց Աստուածային տնաճարին որ ընծայաբերուած է հայ ժողովուրդին և է արդիւնք նորա բարեպաշտական ու կրօնասիրական ըզգացմանց, և այսօր իսկ աչքերի առմէն կողմից հայեր ինձ դիմելով իրենց ներկայացուցիչների միջոցաւ, պատրիարք, եպիսկոպոս, առաջնորդ և ժողովուրդ կը խնդրեն ինձ միջնորդել առ Թագաւոր–կայսրն անխախտ թողնելու իրենց եկեղեցւոյ դարաւոր իրաւունքներ։»

Յանձնաժողովի անդամք մեկնեցան։

* * *

Օգոստ. 15ին իշխան Նակաշիձէ (Պետական յանձնաժողովի նախագահ, վրացի) իր ընկերներով նորից գալիս է վեհափառ Հայրիկի մօտ և խնդիր անում Գանձարանի համար, քանի որ անչարժ կայքերի ցուցակագրելը վերջացած էր և ուրեմն կարգ կուգար Գանձարանին։ Ահա վեհափառի պատասխանի ամփոփումը.

Վեհափառն ասում է որ «Գանձարանի վարկովն է 24.000 րուբլի պարտ վերցրած. առանց Գանձարանի ո՛չ վարկ և ո՛չ էլ ապրուստի միջոց կունենան։ Ես չոյս ունիմ որ իմ բանակցութիւնները մեզ համար նպաստաւոր պիտի լինին։ Այն կաթողիկոս որ կոնդակներով և բերանացի հրամաններով ամէնքս է իր ստորադրեալներին մասնակից չլինել յանձման գործողութիւններին, ի՞նչպէս կուզէք որ նա ձեզ Գանձարան յանձնէ։ Դարձեալ կը կրկնեմ. ո՛չ ես և ո՛չ ալ իմիններս ոեւէ մասնակցութիւն չպիտի ունենանք յանձնելու գործում։ Ա՛յս է իմ վերջին խօսք։ կընքեցէ՛ք եթէ կը հաճիք։»

(1) Այդ աղերսագրի պատճէնն ուրիշ կարեւոր հաղորդագրութիւնների և հեռագիրների հետ մէկտեղ պիտի հրատարակենք Արմենիայի առաջիկայ թիւերին մէջ։

ԽՄԲ.

Պետական յանձնաժողովը կնքեց արտաքին դուռը և հեռացաւ. Ներսի դուռն արդէն կնքուած էր Պրօկուրօրից և բոլոր հաշիւներն ալ Սինոդում կը գտնուէին։

* * *

Օգոստ. 24ի առաւօտ կանուխ զօրքեր սկսեցին պաշարել վանքը. քիչ մը վերջ լուր եկաւ վեհափառին որ չուտով կը գան Գանձարանը վերցնելու։ վեհափառը պատասխանեց որ ինք իր ասելիք արդէն ասել է. չի կարող ընդունել յանձնաժողովի անդամներին և բանիքները չիյանձնիլ։

Ինք վեհափառն ելաւ գնաց Գայիանէ վանք, մօտ 700 քայլ Էջմիածնից հեռու։ Ժամ 9ին, արդէն Էջմիածին կազակներով և զօրքերով պաշարուած էր դրսէն երբ ներսն ալ մի գունդ զօրք մտաւ Մի մաս դուռների վրայ, մեծամասնութիւնն էլ վեհարանի բակում զանազան մասերի բաժնուած, որպէս թէ պատերազմի համար պատրաստ կեցան։ Անմիջապէս կոզակների հետ երեցան և յանձնաժողովի անդամներ ու պրօկուրօր. բանակի մասնաւորներ–կոզակ զինուորներ իրենց քանդողական գործիքներով ջարդել սկսեցին դուռները։ Այն օր ցուցակագրելու գործ չվերջացաւ. ուրեմն և վանք նոյն պաշարման վիճակի մէջ մնաց։ Երեկոյեան վեհափառը վեհարան եկաւ։ Յաջորդ օր, սեպտ. 25ին, կանուխէն յանձնաժողովի անդամները ցուցակագրելու գործին ձեռնարկեցին և մինչև ժամ 3ին հազիւ կրցան վերջացունել։ իրենց հետ տարան կէս միլիոնի դրամագլուխ մը։

Անոնց մեկնելէն անմիջապէս յետոյ, Գանձարան մտայ. ի՛նչ տխուր տեսարան. գռներ այլանդակուած, երկաթէ պահարաններ, արկղներ, դարակներ, պայուսակներ տեղի մասերի բաժնուած և խառնուած աղիւսի, քարի կտորտանքի ու փոշիների մէջ. այդ մութ ներքնայարկի մէջ, մշշապատ ու օձապտոյտ երկաթի կտորներ հրէշային և ոյոր մեծի տեսարան ունէին։ Եւ այս բոլորը կատարուեցաւ օր ցերեկով...։

* * *

Օգոստ. 7ին Արիստակէս եպ. Սեդրակեանց, 10ին Սուքիաս եպ. Պարզեանց՝ Ահռանգապետների միջոցով՝ ներքին գործերի նախարարից կանչուեցան Սամարա քաղաքը։ Սուքիաս

Ե. ՊՈՂՈՍՅԱՆ ԱՆՎ. ՊԵՏ. ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ն. ՊՕԼՈՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՄՊԱՆԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Շար. 27-րդ թվից եւ վերջ)

Ը՛ն ժողովուրդ, ասում են, ունի այնպիսի գյուղատնտեսական կոմպանիաներ, որոնք ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել են իրենց հողերի հանգամանքները, ամեն մի հողակտորի համար գիտեն, թե ինչ պարարտանյութ է պետք նրան, ինչ սերմ է պետք ցանել, ինչ ցանքաշրջանառություն պետք է մտցնել, ինչ մեքենաներ են պետք հողը մշակելու համար, ինչ ձևով պետք է հնձել, կալսել, մաքրել եւ այլն։ Ամեն մի գյուղատնտեսական կոմպանիա ունի իր հատուկ մասնագետները, որոնք ամեն տարի ուսումնասիրում են իրենց հողերը, ամեն տարի նոր ցանքաշրջանառություն են մտցնում, ամեն տարի նոր սերմեր են ցանում, ամեն տարի նոր պարարտանյութեր են գործ դնում եւ այլն։ Ամեն տարի նրանք ստուգում են իրենց հողերի հանգամանքները, ամեն տարի նրանք ստուգում են իրենց ցանքաշրջանառությունը, ամեն տարի նրանք ստուգում են իրենց սերմերը

ՊԱՏԿԱՌԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ

(Շար. 27րդ տարեց)

II

Մ ԱՐ օրից սկսց ձգտել ինձ մոտենալ, ինձ հետ խոսակցել, ես, իհարկե, ոչ մի կերպ չէի ցանկանում նրա ընկերությունը, որովհետև նա ինձ համար ոչ մի հետաքրքրություն չէր ներկայացնում։ Ես նրան համարում էի ինչ-որ ստոր էակ, որի հետ ոչ մի ընդհանուր բան չունեի։ Ես ատում էի նրա ոչ միայն ֆիզիկական տգեղությունը, այլև նրա ներքին աշխարհը, որ ինձ համար ծանոթ էր նրա գործերից։ Ես գիտեի, որ նա ոչ մի ազնիվ գործ չի կարող անել, որ նա ամեն ինչ պատրաստ է անելու, միայն թե ինքը շահի։ Ես գիտեի, որ նա ինձ ատում է, որովհետև ես նրան ծաղրել եմ եղել, և որ նա ինձ հետ մտերմանալ ուզում է միայն այն պատճառով, որ ինձ վրեժ լուծի։ Ես գիտեի, որ նա ինձ հետ մտերմանալ ուզում է նաև այն պատճառով, որ ինձ հետ մտերմանալը նրա համար մեծ պատվի հարց է

քեան մէջ էի, ի՞նչ գնեմ, ծխախո՞տ, առանց որի գլուխս պտտում էր, թէ՞ հաց, առանց որի քիչ էր մնում քաղցից ուշաթափվէի։ Գիշերը շատ ուշ էր, խանութները վաղուց կողպված էին։ Մօտեցայ մի հացթուխի խանութին, զարկեցի դռներին, հացթուխը չուռ եկաւ անկողնում, երազում մրմրթաց։ կրկին զարկեցի, նա զարթնեց և սկսեց վանի բարբառով ինձ հայհոյել։ Բայց իմ խնդիրը մեղմացրեց նրան, դռների արանքից վերցնելով երեքկոպէկանոցս, մի ֆունտ հաց տուեց ինձ ...

Այդպիսի օրեր էր քաշել Րաֆֆին։ Ծիշտ եմ, այդ դէպքը նա պատմում էր ծիծաղելով, առանց որևէ անախորժութիւն արտայայտելու դէպի այդ օրերը։

Բայց ահա և՝ մի ուրիշ դէպք, որ վիպասանը պատմում էր ինձ մի օր, հազիւ հազ կարողանալով զսպել իր յուզմունքը։ Թշուառութիւնները յաճախ թշուառութիւնների հետից են գալիս և երբեմն նրանք այնպէս են բարդվում, որ մարդ ընկնում է անել դրութեան մէջ։ կամքի ամէն մարդիկ մաքառում են ճակատագրի ամենազօրեղ հարուածների դէմ, բայց պատերազմը անհետևանք չէ մնում նրանց բնաւորութեան վրայ։

Նիւթական ամենավերջին կարօտութեան մէջ, Րաֆֆին նամակ նամակի հետից է ստանում Պարսկաստանից, մերթ իւր մօրից, մերթ քոյրերից և մերթ եղբայրներից։ Ամէն կողմից դիմում են նրա օգնութեանը այն ժամանակ, երբ ինքը օրերով անօթի էր մնում։

— Տեսնել ամենամօտիկ արիւնակիցներիդ կարօտութիւնը, զգալ, որ պարտաւոր ես նրանց օգնել և չկարողանաս օգնել — դա է կատարեալ թշուառութիւնը։ Բայց այդ բոլորը չէ։ Ճակատագիրը այնպէս է կարգադրում, որ իմ եղբայրներից մէկը Պարսկաստանից գայ Թիֆլիս ինձ վրայ յոյս դրած, այստեղ հիւանդանայ և քաղաքի մի անկիւնում և կարճ ժամանակից յետոյ մեռնի։ Եւ մեռնի մի այնպիսի օր, երբ ես ոչինչ չունէի նրան թաղելու համար։ Այսօրուայ պէս միտս է, որ ես երեք անգամ վճռեցի դիմել Գրիգոր Արծրունիի օգնութեանը, երեք անգամ մօտեցայ նրա դռներին և երեք անգամ էլ յետ դարձայ։ խորին ինքնասիրութիւնը ինձ թոյլ չէր տալիս իմ ցաւը յայտնել նոյն իսկ մի մարդու, որ առանց բացատրութեան կարող էր զգալ իմ դրութիւնը։

Վերջապէս, չգիտեմ ի՞նչպէս, Րաֆֆին համարձակ երեք բուբլի և գնում է մի դագաղ։ Երեկոյեան մօտիկ իւր եղբօր դիակը գնում է կառք և մի քահանայի ու երկու մշակի հետ տանում թաղելու։

(Շարունակելի)

ԱՆԳԼԻԱՖՐԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՒԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱՆԱԳԻՐԸ

Հոկտեմբեր ամսի քաղաքական նշանաւոր դէպքերէն մին եղաւ այն պայմանագիր որը Անգլիոյ արտաքին գործերի նախարար Լորտ Լէնստաուն և Լոնտոնի Ֆրանսական դեսպան Տ. Գամպօն ստորագրեցին հոկտ. 14ին։ Այդ պայմանագրով Անգլիա և Ֆրանսա յանձնառու եղած են իրենց մէջ ծագած և ծագելիք այնպիսի վէճեր, որոնք իրաւաբանական կարգի կը վերաբերին կամ դաշնագրի մը այս ինչ հատուածին այս կամ այն կերպ մեկնութիւն տրուելուն, ենթարկել Հէյի 1899 յունիս 29ի պայմանագրով հաստատուած Իրաւարարութեան ատեանի վճռին։ Այսու ամենայնիւ, այդ խնդիրներ պէտք չէ որ պայմանագիրը երկու տէրութիւնների ո՛չ կենսական շահերը, ո՛չ անկախութիւնը կամ պատիւը վտանգեն և ո՛չ ալ ուրիշ տէրութիւնների շահերին դպչին։

Ինչպէս կը տեսնուի, պայմանագիրը բաւական առաձգական է եթէ երկու տէրութիւններէ մին չուզէ իրաւարար ատեանի դիմել. այլ սակայն առ այժմ այս ալ բաւական չահ մը կը համարին ընդհանուր խաղաղութեան բարեկամները որոնք կը ձգտին ազգերին իրար դէմ պատերազմի ելնելու միտումները չնչելու գաղափարին։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԱՐՄԷՆԻԱ ԼԻՆՋԻ

Հեղինակի պատկերովը և ինքնակենսագրութեամբ։ Գրեց Պ. Տօնա. պետեան։ Գինը ճանապարհածախքով 3 ֆրանգ։ Դիմել աշխատասիրողին 117, Godolphin Road, LONDON W.

ՀԱՅՈՒ ԳԻՐՔԵՐ

Արմէնիահ խմբագրատան մէջ ծախու կը գտնուին հետեւեալ գիրքերը որոնց առջեւ նշանակուած գիներին մէջ հաշուուած է նաև գրկելու փոստի ծախքը։

Ծրարները ապահովագրուած (recommandé-registered) ստանալ ուզողները պէտք է որ ամէն մէկ ծրարի (մինչեւ 2 քիլօ) համար 25 սանթիմ ապահովագրութեան ծախքը վճարեն։

Արմէնիահ խմբագրատան մէջ ծախու գտնուած գիրքերի մանրամասն ցուցակը հրատարակուած է Արմէնիահ 17րդ շրջանի 38, 39 և 40 թիւերին մէջ։

Այդ թիւերէն յատկապէս առնի տպած լինելով, պատրաստ ենք ձրիապէս գրկել անոնց որոնք կը փափաքին մեր գրացուցակները ունենալ, եթէ գոնէ 50 սանթիմ գրկելով գիրք ուզեն մեզմէ նախապէս. այդ ուզուած գրքի ծրարին մէջ գրուելով կը ղրկուին գրացուցակներն ալ։

Ամէն երկրի փոստերը, քանի՛ սանթիմի համար ալ լինի, մանատոը փոստ կուտան մեզ վճարուելու համար Մարսէյլի մէջ։

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐՈՋ

(Կ. ՓՕԼՄՈՑ ՀԱՑՈՑ ԿԵԱՆՔԷՆ ԱՒՆՈՒԱՑ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐՆԵՑ ԱՂԷՔՍԱՆԴՐԻՈ

Այս հետաքրքրաշարժ դրուագը կը ներկայացնէ ընտանեկան տեսարան պատկերներէ մին ուր կը տեսնուի ֆ անթրոյական մի հայր իւր տպակցուած վարքուբարքով որչա՛փ չարիքներէն պատճառ դարձած է և վերջը վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքէն սպանուած և անհետացած է ալ խարհէ։ Գինն 1 ֆրանգ։

ՄԻ ՊՈՒԼԿԱՐ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ
(ՋԱՔԱՐԻԱ ՍԹՈՑԱՆՈՎ)

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ
ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
1894

Պուլկարիոյ անկախութեան հերոսներէ մէկին, Ջաքարիա Սթոյանովի, որ իր ընդունակութեան շնորհով յաջողեցաւ մի լեռնաբնակ գիւղացի հովուի պարզ վիճակէն հետզհետէ արհեստաւոր, վարժապետ, յեղափոխական գործիչ, խմբագրապետ և վերջապէս ազատ Պուլկարիոյ Ազգային ժողովի նախագահ դառնալ խիստ հետաքրքրաշարժ կենսագրութիւն է, ուր ուշադրութեան արժանի տեղեկութիւններ կան նաեւ Պուլկարիան Թիւրքի լուծէն ազատելու աշխատող պուլկար հայրենասէր յեղափոխականներիգործունէութեանը մասին։ Սկիզբը գրուած է նաեւ հեղինակին, Բրօֆէսէօր Լուի Լէժէի, և Թարգմանչին միջեւ եղած թղթակցութիւնը այս գրքի հայերէն թարգմանութեանն առթով։

Հեղինակը շատ իրաւամբ կը գրէ իր յառաջաբանի վերջ թէ «Ջարմանք պիտի պատճառէ ինձ եթէ ընթերցողների հետաքրքրութիւնը չշարժի պետական մարդ դարձած մի գիւղացիի այս վաւերական պատմութեան վրայ։»

Գինն է փոստի ծախքով մէկտեղ 1 ֆրանգ և 40 սանթիմ։

Տարածելու համար մեծ քանակութեամբ առնողներին 25 % զեղչ կը լինի։

(Պարսկաստանի Հայերին համար 1 ֆրանգ է։

ԺԲ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՇՆԵՐ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ
ԳՐԱԾ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իբրեւ նմոյշներ զանազան քաղաքներու մէջ և զանազան տպաւորութիւններու տակ իւրաքանչիւրին գրուած ոտանաւորներէ որոնք ժամանակին հրատարակուած չ լինելով կորսուած են այժմ։ Այն քանի ոտանաւորները որոնք հոս ամփոփուած են այս տետրակի մէջ, երբ և ցան կը գտնուին Կ. Պոլիս ազգային երգարաններին մէջ՝ որոց վերատին տպագրութիւնն վաղուց արգիլուած է, և Ամերիկայի լրագիրներուն մէջ։ Նմոյշներէ մէջ փոքրիկ տեղեկութիւններ արուած են նաեւ թէ այդ ոտանաւորները ի՛նչ տպաւորութիւններէ տակ ներշն չուելով գրուած են։ Գին 15 սանթիմ։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերուն վրայ մանաւանդ չէզ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած գիներուն։

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (Սպառած)
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՅԱՂՄՈՍ ԻՕՐԱՑԷԼԻ »
Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱԶԳՏԱՊԵՏԻՑ ԲԱԳՂԱՏԱՑ (Սպառած)
Ե. ՀԱՑԱԶԱՏՑԱՆԵԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայաստանցիներուն պանդխտութեան տխուր հետեւանքներուն սէկ փոքրիկ պատկերը կը ներկայացնէ վիպական կերպով) Գին (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.
Զ. ԳԱՄԱՌ ԿԱՔԻՈՒ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենաց աւարտելուց (Սպառած)
Է. ԼԻՆՉԻ ՕՐԷՆՔԸ ՑԱՀԿԱՀՀՑԱՑՑԱՆՈՒՐ. (Սպառած)
Ը. ԹԻՒՐՔԻԱՒ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐՈՑԻՆԵՐ (Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներուն մասին բաղդատական մէջ ցուցակներ ալ կցուած է տետրակին վերջը։) Գին 50 սանթիմ (35 սանթիմ)։
Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՑՈՒՇԱՐԱՐ (Ամէնէքա Ա տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և մնացեալ ժամանակ չատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի էջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն դէպի 30ի չափ ամփոփուած են ցուցարարի մէջ որ ուշադիր դիրքով 124 երեսներէ կը բաղկանայ) (1 ֆրանք)։ 1 ֆր. 40 սանթիմ
Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիոյ մէջ թիւրքերէն արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացնէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի միջոցներ դիմած են իրենց վրէժ լուծելու համար)։ (15 սնթիմ) ,20 սնթմ.
ԺԱ. ԹՈՄԱՍ ՌՈՑԱՐԻՍ (Ցունաստանի մէջ թիւրքերէն արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացնէ և ցոյց կուտայ թէ Յոյներն ի՛նչպիսի միջոցներ դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15սանթիմ) 20 սանթիմ։

ՅՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՄԱՐՍԷԼ
Ձեռնարկ տպարան Մ. Փորթուգալեան
Le Gérant : François CARRIERE
Marseille . — Imprimerie du Midi

ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՑԻՆ ԿԱՂԱԿԱԿԱՆ ԵՒ ԱՑԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 18-դ չրջանի (902 Նոյ. —903 օգոստ.) բաժնորդագինն է 20 Ֆր. կամ. խիկ կարելի է նաև բաժնորդագրուիլ քանի ամսի համար որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2 Ֆր. հաշուելով և 1903 օգոստոս ամսէն անդին չանգնելու պայմանով.

Նամակ և ծրարպէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, Rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France).

ԺԸ ՏԱՐԻ Թիւ 29

1904 ՅՈՒՆՈՒԱՐ 23 Շբ.

(Հ. Տ. Յունուար 10)

(ֆոխարէն ՄԱՑԻՍ 20ի)

ԳԱՑՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, հատուածաբար կամ ամբողջ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները: Չարաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները:

Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով:

Յանուցման 1 միլիմէթրը 1 սանտիմարժէ. 1 գլխագիրը 2 սանտիմ.

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de Rédaction : Rue Beaumont, 9.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թուրքիոյ Հայ եկեղեցիներուն կալուածներուն գրաւման մասին պաշտօնական հաղորդագրութիւններ. — Խառնարամիտ կուսակցութիւնը կը յաղթանակէ դեռ. ռուս կառավարութեան խորհուրդներին մէջ. — Ազգային կրթարան Որբանոց ի Կիպրոս. — Գեր. Ցովսէփ Արքեպիսկոպոս Ամերիկաի. — Նամակ Աւստրիահեն (Վիէննա). — Նոր հրատարակութիւններ. — Մակեդոնական գործեր. — Յանուցումներ.

ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ "ԱՐՄԷՆԻԱ,,Ի ԺԸ ՇՐՋԱՆԻՆ

1902 ՆՈԵՄԲԵՐ–1903 ՕԳՈՍՏՈՍ

18րդ չրջանի բաժնորդագրութիւնը կըսկսի 1902 Նոյեմբերէն և կը տեւէ մինչև 1903 օգոստոսի վերջը, Ամբողջ 18րդ չրջանի բաժնորդագինն է 20 ֆրանգ կանխիկ վճարելի, կարելի է նաև բաժնորդագրուիլ քանի՛ ամսի համար որ ուզուի, ամսական 2 ֆրանգ հաշուելով.

Անդրադարձ ԱՐՄԷՆԻԱԻ ՕԺԱՆԴԱԿ կը գրուին մեր հրատարակած Օժանդակութեան կանոնագրի համեմատ կատարելով իրենց պարտականութիւն, իրաւունք կունենան, իրենց ստացած 1 օրինակ Արմենիային զատ — որի համար ամբողջ բաժնորդագին 20 Ֆր. պէտք է վճարեն —, քանի՛ անձի համար որ ուզեն, Արմենիա բերել տալու իրենց ստացած լրագրի ծրարին մէջ դրուելով և կէս բաժնորդագնով, այսինքն՝ ամբողջ չրջանին համար 10 Ֆր.ով և կամ ամսական 1 Ֆր.ով: Յանկացողին կը ղրկենք «Արմենիաի Օժանդակութեան» համար մեր հրատարակած կանոնագիրը:

Բաժնորդագիններուն կանխիկ վճարումը մեծ դիւրութիւններ կընծայէ թերթի կանոնաւոր ընթացքին և յայտնի է որ Եւրոպաի և Ամերիկաի մէջ ամէն ազգեր սովորութիւն ունին իրենց ստացած լրագրի բաժնորդագինը կանխիկ ղրկելու. անոր համար իրենց լրագիրները ալ կրնան կանոնաւոր ընթացք մ՛ունենալ:

ՌՈՒՍԻԱԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՒ ԿԱԼՈՒԱԾՆԵՐՒ ԳՐԱԻՄԱՆ ՄԱՍԻՆ

պաշտօնական հաղորդագրութիւններ

Ամէնէիաի 24րդ Թուով երկար տեղեկագիր մը հրատարակած ենք որ Ռուսիոյ հայ եկեղեցապատկան կալուածներուն նկատմամբ մինչև օգոստոս 22/4 սեպտ. ռուս կառավարութեան և մեր վեհ. կաթողիկոսի միջև փոխանակուած թղթակցութիւնները կը ներկայացնէր:

Ահա այժմ ալ, իբրև անոր չարունակութիւն, կը հրատարակենք նոյն Թուականէն մինչև սեպտ. 12/25 եղած պաշտօնական թղթակցութիւնները պարունակող հետեւեալ տեղեկագիրն ալ.

ՄԿՐՏԻՉ Ծառայ Քհսուսի Քրիստոսի (կայլն):

Սիւնհոդին Ս. Էջմիածնի

Մեք իբրև Ընդհանրական Հայրապետ Ամենայն Հայոց, ընտրեալ միաձայնութեամբ Ազգիս ի Քահանայապետութիւն հօտի Ս. Հոգւոյ մերոյ Գրիգորի Լուսաւորչի և ծայրագոյն վերատեսուչ առաքելական Ս. Եկեղեցւոյ Հայաստանեայց, այսու Հայրապետական կոնդակաւ մերով պատուիրեմք Ատենիդ չառնել ոչինչ կարգադրութիւն ի կողմանէ Սինհոդիդ, առանց հրահանգութեան մերոյ, վասն նորոգ կարգադրութեան ժողովոյ նախարարաց, հաստատեալ Բարձրագոյն հաճութեամբ ի 12ն յունիսի տարւոյս, յաղագս նոր եղանակի կառավարութեան գոյից և ստացուածոց եկեղեցեաց և վանօրէից մերոյ Ռուսաստանի:

Թ. 1001.

ի 21ն օգոստոսի 1903.

*
* *

Ներքին գործերի նախարարութիւն.

Նորին Սրբութեան Ամենայն Հայոց կաթողիկոսին Էջմիածին.

Ձերդ Սրբութիւն,

Ողորմած Հովուապետ (1)

*
* *

Օգ. 26ին Ս. Պատրիարքէն ստացուեց մի լաւ կազմուած և երկար զրուցութիւն որի իմաստը ժողովրդապետս այս է թէ եկեղեցապատկան կալուածները հին համայն հայութեան կը պատկանին, որը նախորդ կայսրներէն ալ վաւերացուած է Պօլսոյ Էնիայի զանազան յօդուածներով: Տեղեկութիւն տուած է իրենց 11 եպիսկոպոսներով ըրած ժողովներուն և որոշմանց մասին:

*
* *

Իշխան Գալիցին մի գրութեամբ հրամայած էր յետաձգել անորոշ ժամանակաւ միւռոնօրհնութեան սուրբ հանդէսը. բայց նրա գրութիւն հասնելէն և որոշեալ ժամանակէն առաջ, վեհափառի հեռատեսութեան չնորհով կատարուել էր արդէն այդ հանդէս:

*
* *

Հեռագիր

Նորին Գայծառափայլութիւն Իշխան կառավարչապետին Թիֆլիզ.

Ցիշեցէք առ այս պահանջ, մինչ սիրտ իմ յարիւն հարեալ լնու տեսեալ զընդվայր և զանպատակ կորուստ որդւոց իմոց որք դառնան զոհ դժբաղդ բերմանց հանգամանաց: Չէ ինձ, որ կամ առ դուռն գերեզմանին և եմ խոնարհ պաշտօնեայ սեղանոյ Աստուծոյ և զայն միայն խորհիմ զի սրբութեամբ կատարեցից զպարտս իմ և խաղաղ խղճիւ մտաց յանդիման եղէց առաջի աթոռոյ Բարձրելոյն, չէ ինձ զմտաւ ածել զընդդիմութիւն բարձրագոյն իշխանութեան, զանհնազանդութիւն արքային իմում: Ցամենայն զօրութենէ հոգւոյ բողոքեմ ընդէմ մեզադրանացն զոր դնեն ի վերայ իմ և հոգևորականութեան իմոյ և համարիմ զան հետևանս անճիշտ մեկնութեան գործողութեանց իմոց առաջի արքայական գահոյից, եթէ յայտմ և եթէ յայլ խնդիրս որ յարուցեալ են ցարդ վերաբերութեամբ Հայաստանեայց եկեղեցւոյ:

Մահու և կենաց համարելով խընդիրը վասն համայն հոգևորականութեան և հօտին իմոյ՝ զհնարաւորութիւն ըստ ամենայնի բացատրութեան եղանակի գործողութեանց իմոց առաջի Ն. Մեծութեան թագաւորկայսեր, ես, ըստ գրութեան Ձերդ Բարձր Գերազանցութեան, անհրաժեշտ վարկայ դիմել Ն. Պայծառափայլութեան կառավարչապետի քաղաքական մասին կովկասու և խնդրել զի միջնորդեսցէ թոյլ տալ ինձ յանդիման լինել առաջէ լուսաւոր երեսաց ամենաողորմած թագաւորին իմոյ և մերկանալ առաջի վեհանձն հովանաւորի եկեղեցւոյն իմոյ զվշտագնեալ սիրտ իմ:

Նիկոլ, որը նախորդ կայսրներէն ալ վաւերացուած է Պօլսոյ Էնիայի զանազան յօդուածներով: Տեղեկութիւն տուած է իրենց 11 եպիսկոպոսներով ըրած ժողովներուն և որոշմանց մասին:

*
* *

Իշխան Գալիցին մի գրութեամբ հրամայած էր յետաձգել անորոշ ժամանակաւ միւռոնօրհնութեան սուրբ հանդէսը. բայց նրա գրութիւն հասնելէն և որոշեալ ժամանակէն առաջ, վեհափառի հեռատեսութեան չնորհով կատարուել էր արդէն այդ հանդէս:

*
* *

Հեռագիր

Ն. Բ. Գերազանցութիւն տէր Նախարարին Ներքին գործոց Պետերբուրգ.

Գրութիւն Ձեր որ յ13 օգոստ.ի այսր ամի, ընդ համարաւ 4289, համակեաց զիս ի վիշտ անպատմելի. տանջիմ ի խոկալն, եթէ հակառակ հանապազօր հայ անկեղծ չանից իմոց լինել արժանի բարձր ողորմութեան և բարեհաճութեան զոր ցուցին յար անփոփոխ ինքնակալ վեհապետք Քրիստոսասէրն Ռուսաստանի առ նախորդս իմ, համարին զիս ի ժամանցման առուրց իմոց անհնազանդ թագաւորին կամաց: Ապեղադրիմ ի ծանրագոյն յանցանս. իբրև թէ առաջնորդեալ է իմ ստորադրելոցն իմոց ցուցանել ընդդիմութիւն հարձրագոյն հրամանին, մինչ չէ լեալ ի գործողութիւնս իմ ստուերն իսկ մտաց անհնազանդութեան թագաւորական կամաց, որպէս ակնարկի ի գրութեան անդ Ձերդ Բարձր Գերազանցութեան:

Միակ կէտ նպատակի որ առաջնորդէրն ինձ, էր ցանկութիւն յայտնել զկամս մտաց իմոց առաջի մեծազօր հովանաւորին եկեղեցւոյն իմոյ և հօտի և ամենահպատակօրէն բացատրել արքային իմում եթէ յո՛րպիսի անեղանելի կացութիւն անկեալ կամ ես կարգադրութեամբ որ յ12 յունիսի: Առաւել ևս այժմ զգամ զհարկեցուցիչն առ այս պահանջ, մինչ սիրտ իմ յարիւն հարեալ լնու տեսեալ զընդվայր և զանպատակ կորուստ որդւոց իմոց որք դառնան զոհ դժբաղդ բերմանց հանգամանաց: Չէ ինձ, որ կամ առ դուռն գերեզմանին և եմ խոնարհ պաշտօնեայ սեղանոյ Աստուծոյ և զայն միայն խորհիմ զի սրբութեամբ կատարեցից զպարտս իմ և խաղաղ խղճիւ մտաց յանդիման եղէց առաջի աթոռոյ Բարձրելոյն, չէ ինձ զմտաւ ածել զընդդիմութիւն բարձրագոյն իշխանութեան, զանհնազանդութիւն արքային իմում: Ցամենայն զօրութենէ հոգւոյ բողոքեմ ընդէմ մեզադրանացն զոր դնեն ի վերայ իմ և հոգևորականութեան իմոյ և համարիմ զան հետևանս անճիշտ մեկնութեան գործողութեանց իմոց առաջի արքայական գահոյից, եթէ յայտմ և եթէ յայլ խնդիրս որ յարուցեալ են ցարդ վերաբերութեամբ Հայաստանեայց եկեղեցւոյ:

Մահու և կենաց համարելով խընդիրը վասն համայն հոգևորականութեան և հօտին իմոյ՝ զհնարաւորութիւն ըստ ամենայնի բացատրութեան եղանակի գործողութեանց իմոց առաջի Ն. Մեծութեան թագաւորկայսեր, ես, ըստ գրութեան Ձերդ Բարձր Գերազանցութեան, անհրաժեշտ վարկայ դիմել Ն. Պայծառափայլութեան կառավարչապետի քաղաքական մասին կովկասու և խնդրել զի միջնորդեսցէ թոյլ տալ ինձ յանդիման լինել առաջէ լուսաւոր երեսաց ամենաողորմած թագաւորին իմոյ և մերկանալ առաջի վեհանձն հովանաւորի եկեղեցւոյն իմոյ զվշտագնեալ սիրտ իմ:

(1) Ներքին գործերի նախարարութենէն մեր Վեհ. Կաթողիկոսին եկած այս ծանուցագիրը փութացած ենք արդէն հրատարակել Արմենիաի 26րդ Թուով. հետևապէս ուշադիր կը համարինք այստեղ կրկնել:

ԽՄԲ.